# Քրիստոնյա Հայաստան

2011, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (334)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Սբ Պատարագ Հայոց բանակի օրվա առիթով



Հունվարի 27-ին, Բանակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, ըստ ավանդույթի, մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս Աբրահամյանը:

Արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմի անդամներ:

Վրթանես սրբազանն իր քարոզում հավուր պատշաճի ներկայացրեց Հա-



յոց բանակի կարեւորությունն ու դերը մեր պետականության պահպանման եւ ամրապնդման հարցում:

Պատարագից հետո տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց ներկաներին: *«Գեղեցիկ ավանդույթ է ձեւավորվել, որ ամեն տարի, Բանակի օրվա կապակցությամբ, Հայոց բանակի հրամանատարական կազմը՝ գլխավորությամբ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, գալիս է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իր աղոթքն առ Աստված բարձրացնելու եւ իր ուխտը սուրբ Սեղանի առջեւ կատարելու՝ հավատավոր հայ զավակների եւ Մայր Աթոռի միաբանների հետ, աղոթելու եւ հայցելու, որ Տերն անսասան պահի Հայաստան երկիրը եւ հզոր ու հաղթական Հայոց բանակը:*

*Հայրենիքը հայոց նվիրական սուրբ հողն է՝ դարերի պատմությամբ նվիրագործված, մեր հայրերի ու զավակների սուրբ արյունով նվիրագործված: Հայրենիքը նաեւ մեր մշակույթն է, մեր հոգեւոր արժեքները, մեր եկեղեցին, հայոց ընտանիքն ու հայ մարդը, որի պաշտպանությանը կոչված է ծառայելու Հայոց բանակը: Ահա թե ինչու մենք նվիրական պարտք ենք համարում համապազօրյա աղոթք բարձրացնել առ Աստված, որպեսզի բանակը միշտ լինի զորեղ ու հաղթական»*,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը Հայ Եկեղեցու «Սբ Ներսես Շնորհալի» պատվո շքանշանով պարգեւատրեց պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, փոխնախարար գնդապետ Դ. Տոնոյանին եւ ԶՈՒ գլխավոր շտաբի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Է. Ապրիամովին:



## Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նյու Յորքում նախագահեց ԱՄՆ Արեւելյան թեմի թեմական խորհրդի ժողովը

Հունվարի 21-ին Նյու Յորքում տեղի ունեցավ Ամերիկայի Միացյալ Նահանգների Արեւելյան թեմի թեմական խորհրդի ժողովը՝ նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:



Թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը ողջունեց Նորին Սրբության այցը թեմի առաջնորդարան եւ շնորհակալություն հայտնեց այն հաճելի հնարավորության համար, որ պիտի կարողանան հաղորդ դառնալ Վեհափառի ծրագրերին ու մտածումներին:

Ողջույնի խոսք ասաց նաեւ թեմական խորհրդի ատենապետ Օսկար Թաքոյանը:

Ժողովի ընթացքում Խաժակ սրբազանը տեղեկացրեց խորհրդին, որ այս տարի նշվելու է Նորին Սրբության ծննդյան 60-րդ տարեդարձը, եւ այս առիթով Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշել է հաստատել համաշխարհային հիմնադրամ, որը կնպաստի ապագա եկեղեցականների կրթությանը: Խորհրդի անդամները վստահեցրեցին, որ կնպաստեն այս ջանքերին եւ Արեւելյան թեմում պատշաճ կերպով կկազմակերպեն անհրաժեշտ միջոցառումները: Նորին Սրբության գահակալության տասը տարվա ընթացքում երեք հարյուր եկեղեցական է ձեռնադրվել, Հայաստանում այս տարի ծրագրվում է բացել նոր ճեմարան: Ամեն տարի մի քանի նորօծ քահանաներ հրավիրվում են Արեւելյան թեմ, ուր սերտորեն գործակցելով փորձառու հոգեւոր հովիվների հետ՝ ծանոթանում են Միացյալ Նահանգներում գործող ծխական կյանքին՝ պատրաստվելով թեմում իրենց ապագա ծառայությանը՝ իբրեւ հոգեւոր հովիվներ:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց սրբազանին եւ թեմական խորհրդի անդամներին, ապա քննարկեց ապագայի ծրագրերը, որոնք ուղղված են նոր եկեղեցականների պատրաստությանը, պատմական տաճարների ու վանքերի վերականգնմանը, նոր եկեղեցիների կառուցմանը, կրթական ծրագրերի իրագործմանը, Եկեղեցու վարչակազմակերպական կյանքի կանոնակարգմանը, ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով քարոզչության ընդարձակմանը եւ հայորդիների հոգեւոր փորձառության խորացմանը: Այս ջանքերի շնորհիվ ժողովուրդը հայրենիքում ավելի է մոտենում իր հավատին, եւ քրիստոնեությունը վերահաստատում է իր պատմական դերակատարությունը հայ ազգի կյանքում:

Նորին Սրբությունը նշեց, որ բոլոր այս ծրագրերը, սակայն, հնարավոր կլինի իրագործել Հայոց Եկեղեցու ավելի զորեղ վարչական կառուցվածքով: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետն ասաց, որ Արեւելյան թեմի կանոնադրությունն օրինակելի է, եւ ընդգծեց անհրաժեշտությունը բոլոր թեմական կառույցների կողմից իրենց կանոնադրական փաստաթղթերում ընդգրկել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո պատրաստված եւ 2009 թ. աշնանը Մայր Աթոռում գումարված Թեմական ներկայացուցչական հավաքում հաստատված թեմական կանոնադրության ուղենիշը:

Նորին Սրբությունը նաեւ պատասխանեց թեմական խորհրդի անդամների հարցերին:

## Իրաքի կրոնական առաջնորդների արտահերթ վեհաժողովը Կոպենհագենում

Հունվարի 11-14-ը Կոպենհագենում տեղի ունեցավ Իրաքի կրոնական առաջնորդների արտահերթ վեհաժողովը, որին մասնակցում էին ինչպես Իրաքի սուննի եւ շիա ուղղությունների առաջնորդները, այնպես էլ քրիստոնեական համայնքների առաջնորդներն ու պառլամենտի անդամներ: Ժողովին մասնակցում էր նաեւ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արք. Ասատուրյանը:

Վեհաժողովն ընդունեց հռչակագիր, որում մասնավորապես ասվում է, որ Իրաքի քաղաքական վերածննդի համար կենսական նշանակություն ունեն երկրի բնակիչների անվտանգության ապահովումը եւ վստահության վերականգնումը սեփական երկրի նկատմամբ, որի գրավականներից մեկն էլ քրիստոնյաների նկատմամբ կիրառվող բռնության եւ հալածանքների խսպառ կանխարգելումն է: Ըստ հռչակագրի՝ հանրային իրավունքի եւ իրավահավասարության սկզբունքների գործնականացումը պետք է դրվի Իրաքի սահմանադրության հիմքում, իսկ ծառայությունը պետական մարմիններում պետք է իրականացվի առանց կրոնական խտրականությունների:

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՅԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ
# (1655-1680)

*Սկիզբը՝ 2010-ի թիվ 22-24, 2011-ի թիվ 1*



Գալանոսի եւ նրա ընկերակիցների համար պարզ դարձավ, որ ձեւական է հայերի միությունը Հռոմի հետ, ուստի ձեռնամուխ եղան հայադավան ծեսերը զեղչելուն եւ հռոմեադավան ծեսեր ներմուծելուն: Նիկոլը դրական վերաբերմունք էր ցույց տալիս, բայց դրանք չէր գործադրում, որ ժողովրդի համար ատելի չդառնա: Սակայն Գալանոսն ու իր ընկերները իրենց նպատակներից չէին շեղվում եւ օգնություն գտնելով լեհ ազնվական Լազար Սլոնովսկուց, որը խոսում էր 78 լեզվով, սակայն երկար տարիներ կուրացած էր, սպառնական դիրք գրավեցին Նիկոլի նկատմամբ: Նիկոլն էլ իր հերթին աշխատում էր գոհացնել Գալանոսին եւ չգրգռել ժողովրդին: Գալանոսը կարողանում է 1664 թվի նոյեմբերի 7-ին աքսորել տալ Յակոբ Բրոսկուն, որ բնիկ արեւելյան քահանա էր, քանի որ ընդդիմանում էր նրանց: Այս հետապնդումներն իրենց արդյունքն են ունենում, եւ հայերը զիջողության են գնում: 1664 թվի դեկտեմբերի 25-ին համաձայնություն են կնքում, քանի որ վտանգ կար, որ թագավորական արտոնությունները կվերացվեն: Գալանոսն աստիճանաբար հայկական ծեսերը հանում է հայոց եկեղեցիներից եւ հռոմեադավանությունը մտցնում հայոց մեջ: Այսպես եղավ նաեւ Ստանիսլավում, Զամոստիայում եւ այլ վայրերում: Հայ հոգեւորականները, որ չէին կամենում ենթարկվել, հալածվում էին: Մեծ հակառակության հանդիպեց Յակոբ կաթողիկոսի նվիրակ Պողոս Եվդոկացին, որը փորձում էր Լվովում համոզել, որ ոչինչ չի կարելի փոխել առանց կաթողիկոսի համաձայնության: Նրան հալածում են եւ 1665 թվի հոկտեմբերի 29-ին ստիպում Լեհաստանից հեռանալ: Դրանից հետո միությունը պարտադրվեց:

Այդ ժամանակաշրջանի լուսավոր կետերից էր հայ տպագրական գործի խթանումը Ոսկան Երեւանցու կողմից: Այդ գործը նրա վրա դրվեց Ծարեցու մահվանից հետո, բայց նա էլ իրենից առաջ ուղարկեց Կարապետ Անդրիանեցուն: Ոսկանը, չնայած Երեւանցի էր կոչվում, ծնվել էր Սպահանում՝ 1614 թվին, նախապես աշակերտել էր Խաչատուր Կեսարացուն, Մովսես կաթողիկոսի օրոք եկել էր Էջմիածին, հետո վերադարձել էր Սպահան եւ Փիլիպոս կաթողիկոսի օրոք ծառայության էր հրավիրվել Մայր Աթոռ: Նա մտերմացավ Պողոս Փիրոմալի լատին կրոնավորի հետ, որը գտնվում էր Էջմիածնում, եւ նրանից սովորեց լատին լեզուն: Ինքն էլ իր հերթին նրան հայերեն սովորեցրեց: Երկուսն էլ լավ չէին սովորել այդ լեզուները, սակայն թարգմանություններ էին կատարում: Անգամ հանդգնեցին «Աշխարհացոյց»-ը թարգմանել: Փիրոմալին 1638-ին վերադարձավ Հռոմ եւ հայոց կաթողիկոսի փափագը կատարելու համար ձեռնամուխ եղավ Աստվածաշնչի թարգմանությանը, բայց դա նրան չհաջողվեց, եւ պապական գրաքննությունն անգամ նրան թույլ չտվեց այն հրատարակել: 1642-ին նա նորից եկավ Էջմիածին եւ Ոսկանի հետ համագործակցեց՝ հայերեն Աստվածաշունչը հրատարակելու համար, սակայն միշտ ձգտելով հայերեն օրինակը լատինականի հետ ձուլել: Երբ Յակոբ կաթողիկոսը Ոսկանին ձեռնադրեց եպիսկոպոս ու Արեւմուտք ուղեւորեց, նպատակը Աստվածաշնչի տպագրությունն էր: Իսկ Ոսկանի ձեռքին այդ բռնազբոսնյալ օրինակն էր: Նա սկզբում գնաց Լիվոռնո, ուր գտնվում էր նրա եղբայր Ավետիսը, որը Ոսկանին փոխանցեց Ծարեցուց մնացած Ամստերդամի տպարանը: Նա հայ վաճառականներ Ստեփանոս Խանենցից, Թեոդորոս Քթրեչենցից եւ Պետրոս Տեր-Ավագենցից անհրաժեշտ գումար հավաքեց: Տպագրությունն իրականացնելուց հետո նրանք պետք է իրենց գումարը ետ ստանային, իսկ շահը բաժանեին Էջմիածնի, Երուսաղեմի ու Ուշիի վանքերի վրա: Այդ ոգով պայմանագիր էլ կնքվեց: Ոսկանը 1663-ին եկավ Ամստերդամ եւ ձեռնամուխ եղավ Աստվածաշնչի տպագրությանը: Նա նոր տառեր, զարդեր եւ պատկերներ պատվիրեց: Այդ ընթացքում նա ուրիշ հրատարակություններ էլ կատարեց: Աստվածաշնչի տպագրությունն սկսվեց 1666-ին, բայց մինչ այդ Ոսկանի կողմից Լվով է գալիս Վարդան աբեղան եւ առաջարկում տպարանը Լվով տեղափոխել: Գալանոսը փորձում է դրան ընթացք տալ, քանի որ Ոսկանին բերելով Լվով՝ նոր հարված էր տրվում հայադավանությանը: Սակայն Ոսկանը դրան չի պատասխանում եւ շարունակում է իր գործը Ամստերդամում: Նույնիսկ Փիթուն կասկածում է, որ Ոսկանն իր միտքը փոխել է՝ իրենց Լվովում գտնվելու պատճառով:

Աստածաշնչի տպագրությունն ավարտվեց երկու տարում՝ 1668 թվականին: Դա առաջին հայերեն Աստվածաշունչն էր: Այն իր նախորդ հրատարակությունների համեմատությամբ գերազանց գործ էր, սակայն լավը չէր տպագրության բնագիրը: Այն աղավաղումն էր նախնի ընտիր թարգմանության: Հնարավոր է, որ այն Փիրոմալիի հետ կազմած օրինակն էր, չնայած չի բացառվում, որ դրա հեղինակը հենց Ոսկանն էր: Հրատարակվածը մեծ փոփոխություններ ուներ, ինչը որ անտեղի էր, ոչ թույլատրելի: Արդեն իր ժամանակին այդ փոփոխությունների համար նա քննադատվել է խղճմիտ բանասերների կողմից: Այսուհանդերձ այն տարածվեց ամենուր, եւ նրա հիման վրա են տպագրված Պետրոս Լատինացու Կ. Պոլսի՝ 1705 թվականի, Մխիթար Սեբաստացու Վենետիկի՝ 1733 թվականի նոր տպագրությունները՝ չհաշված Նոր Կտակարանի հիշատակարանները: Շատերը հարեցին Ոսկանի հրատարակությանը, մինչեւ որ 1805-ին Վենետիկում Յովհաննես Զոհրաբյան վարդապետը հրատարակեց Աստվածաշունչը՝ ըստ նախնյաց թարգմանության:

Աստվածաշնչի հրատարակությունից հետո Ոսկանը ձեռնամուխ եղավ այլ գործերի հրատարակության եւ շատ դժվարություններ կրեց: Նա մնաց Ամստերդամում մինչեւ 1669 թիվը եւ հրատարակեց եւս մի քանի գրքեր: Սակայն ստիպված եղավ հեռանալ Ամստերդամից, չնայած այնտեղ պայմանները լավ էին: Նա հեռացավ պարտքերի պատճառով. դրամը վերջանալիս՝ նա անձնապես պարտք էր վերցրել: Լիվոռնացի երեք հայ վաճառականներն իրենց խոստումը չկատարեցին, բայց, թերեւս, նախնական գումարից ավելին չտվեցին: Արեւելք ուղարկված Աստվածաշնչի օրինակների մի մասը նավաբեկության պատճառով կորավ, իսկ մյուս մասը վաճառվեց, բայց գումարը Ոսկանին չհասավ: Որպեսզի տպարանը չբռանգրավվի, Ոսկանն այն ձեւակերպեց Կարապետ Անդրիանեցու անունով: Այսպես նա խույս տվեց Ամստերդամից եւ տպարանը տեղափոխեց Լիվոռնո: Սակայն Իտալիայում էլ ուժեղ էր գրաքննությունը, եւ հռոմեադավանությանը հակառակ գրքեր տպել հնարավոր չէր: Ուստի նա 1669-ի մայիսի 26-ին դիմեց Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորին, որ արտոնվի իրեն նրա թագավորության մեջ բացելու տպարան, քանի որ ֆրանսիական գրաքննությունը նրան ավելի հանդուրժող էր թվում: Նամակի հետ իր հրատարակած Աստվածաշնչի մի օրինակ ուղարկեց: Լիվոռնացի հայ վաճառականները, իրենց օրինակներն ստանալով, պարտքերի հարցում Ոսկանին չօգնեցին:

*Շարունակությունը՝ էջ 4*

> «Հողն իր տիրոջն ու արյունակցին կը սպասե»
>
> *Մ. Գալշոյան*

# Սուրբ Խաչը կսպասի իր տիրոջը

Մեր պապերի բնօրրանը՝ Արեւմտահայաստանը, արդեն ինը տասնամյակից ավելի զրկված է հայությունից:

Ցեղասպանության իրագործման հետեւանքն այն եղավ, որ ողջ Արեւմտյան Հայաստանում փոխվեց ժողովրդագրական նկարագիրը, եւ երկիրը զրկվեց իր բնիկ տարրից՝ հայ մարդուց, հայ քաղաքացուց, հայ հավատացյալից, հայ աղոթողից: Դեպի երկինք պարզված քրիստոնեական հավատի հարյուրավոր ու հազարավոր կոթողներ ոչնչացվեցին արդեն իսկ ցեղասպանությանը հաջորդած մի քանի տասնամյակների ընթացքում: Նույնիսկ 1960-70-ական թվականներին խավարամոլ թուրքական իշխանությունների անմիջական հրահանգով Թուրքիայի տարբեր մասերում տրակտորների թրթուրների տակ վանքեր ու եկեղեցիներ էին ավերակվում, հիմնիվեր ոչնչացվում:

Եվ հայ ժողովրդի դարեդար կերտած քրիստոնեական հազարավոր արժեքներից այժմ պահպանվել են մի քանիսը, որոնց շարքում ամնաարժեքավորը եւ քիչ թե շատ ամբողջապես պահպանվածը Վանա լճում գտնվող Աղթամար կղզու Սբ Խաչ եկեղեցին է՝ միջնադարյան հայկական ճարտարապետական մտքի լավագույն հուշարձաններից մեկը:

Աղթամարի սույն հրաշակերտ տաճարի ճարտարապետն ու քանդակագործը միջնադարի հայ հանճարեղ այր Մանուելն է: Տաճարը կառուցվել է 915-921 թվականներին: 927 թվականին Աղթամար է տեղափոխվում Ամենայն Հայոց կաթողիկոս Յովհաննես Դրասխանակերտցին, որն այնտեղ մնում է մինչեւ Վասպուրականի Գագիկ Արծրունու մահը: Վասպուրականի Արծրունյաց թագավորության անկումից հետո՝ 1113 թ., Աղթամարի եպիսկոպոսությանը տրվում է կաթողիկոսության աստիճան, որն առավել ազդեցիկ է դարձնում նրա դերն ու նշանակությունը հայոց



հոգեւոր ոլորտում: Աղթամարի տաճարն ունի քանդակազարդ վեց գոտի, որով այն առանձնահատուկ տեղ է գրավում միջնադարյան հայ արվեստում: 13-19-րդ դարերի ընթացքում տաճարը հարստացվել ու շրջապատվել է այլ կառույցներով, տապանաքարերով եւ բազմաթիվ խաչքարերով:

Դեռեւս 1916 թ. ռուսական մամուլում հաղորդումներ են եղել, որ Ախթամարի Ս. Խաչ եկեղեցու հարուստ գրապահոցում անվնաս մնացած 30 թանկարժեք ձեռագիր փրկվել է թուրք բարբարոսների ճիրաններից եւ փոխադրվել Էջմիածնի մատենադարան, իսկ մնացած՝ անգնահատելի արժեքները կողոպտվել են: Լիմ անապատի վանքի գրապահոցից հափշտակվել են 300 մագաղաթյա ձեռագիր եւ 800 կտոր պղնձյա հին առարկա: Կտուց անապատի վանքի պահեստների մետաղյա թանկարժեք բոլոր առարկաները հափշտակվել են թուրք եւ քուրդ խուժանի կողմից: 1915 թ. ընդհանուր առմամբ հաջողվեց փրկել 1756 ձեռագիր եւ դրանք հասցնել մատենադարան:

Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ 1912-13 թթ. հայոց պատրիարքարանը կազմել է կայսրության տարածքում գործող հայկական վանքերի եւ եկեղեցիների ցուցակը: Համաձայն վերոնշյալ ցուցակի՝ Արեւմտյան Հայաստանում գործող հայկական վանքերի եւ եկեղեցիների թիվը հասնում էր 2200-ի: Այդ կառույցներից շուրջ 2150-ը եղեռնի տարիներին թալանվել ու հրկիզվել է: Թուրքական իշխանությունների բարբարոսական գործողությունների կանխամտածված ձեւն ու չափերը հաստատում են հայկական նյութական եւ հոգեւոր մշակույթի ծրագրված եղեռնը:

Այժմ «Աղթամար»-ը թուրքերը դարձրել են «Աքդամար» (սպիտակ կրակ) եւ այն վերածել հուշակոթող-թանգարանի: 2007 թ. մարտի 29-ին կայացավ նրա վերաբացման արարողությունը, որին ներկա էին Պոլսո Հայոց պատրիարքը, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ, նաեւ Հայաստանից Վան ժամանած մի պաշտոնական պատվիրակություն: Թուրքական իշխանությունները Ս. Խաչի վերանորոգման հարցը փորձում էին արժանացնել միջազգային հանրության ուշադրությանը: Դա, անշուշտ, կեղծ ժեստ էր՝ ուղղված համայն աշխարհին եւ հայությանը, թե Թուրքիան հարգանքով եւ հանդուրժողականությամբ է վերաբերվում կրոնական փոքրամասնություններին եւ պահպանում նրանց պատմամշակութային արժեքները: Սակայն այն չստացվեց:

Հայ հոգեւորականությունը (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանները) ընդհանրապես հրաժարվեց մասնակցել Ս. Խաչի վերաբացման արարողությանը: Սփյուռքահայությունը եւս հրաժարվեց մասնակցել թուրքական սուտուփուչ հանդեսին:

Աղթամարի հրաշքը կերտած եւ նրա իսկական ու իրավական ժառանգորդը հանդիսանում է հայ ժողովուրդը:

Դարեր շարունակ Ս. Խաչի գմբեթի ներքո հնչել է «Հայր մեր»-ը, որով հավատացյալ հայ մարդու սրտի մրմունջն է ուղղորդվել ու առաքվել առ Աստված: Դարերի ընթացքում որքան քրիստոնյաներ են



այցելել սույն հրաշագեղ տաճարը, որքան մկրտություն է կատարվել, հոգեւոր բնույթի ուրախ ու տխուր ծեսեր տեղի ունեցել:

Ս. Խաչն ու նրան կերտած հայ ժողովուրդը անբաժան են եղել իրարից հարյուրամյակներ շարունակ: Եվ միայն դարի մեծագույն դժանությամբ՝ ցեղասպանության միջոցով է հայ ժողովուրդը ֆիզիկապես օտարվել իր դարավոր սրբազնագույն աղոթատաճարից:

Սակայն Սուրբ Խաչը սպասել եւ կսպասի իր օրինական տիրոջը:

Հեռու չէ այն ժամանակը, երբ նորից հայ ուխտավորների հոծ խմբերով կխախտվեն Աղթամարի տարօրինակ լռությունն ու անդորրը: Եվ վերստին հայի շուրթերից առ Երկնավորը սիրո եւ աղոթքի մրմունջը կլսվի օրն ի բուն, հար ու հարատեւ:

Քանզի Աղթամարի հրաշքը հայ ոգու ձեռակերտ հուշարձանն է:

**Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

*Պատմական գիտ. թեկնածու*

# ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԻ ՄԱՐԴ

## Կոստան Զարյանի ծննդյան 125-ամյակի առթիվ

*Սկիզբը՝ 2010-ի թիվ 24, 2011-ի թիվ 1*

Հայ ժողովուրդը, եւ մասնավորապես նրա արեւմտահայ հատվածը, 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում ազգային գոյամարտի սեղանին դրեց դարերի ընթացքում երազված ազատաբաղձական իր նվիրումներն ու միտքը, ապրեց իր պատմության ամենաոգեւորիչ եւ միեւնույն ժամանակ ամենաողբերգական տարիները ու այդ ամենի ճանապարհին կորցրեց հայրենի հողն ու հայրական տունը, տվեց կյանք ու արյուն եւ ցրոնք դարձավ աշխարհի չորս ծագերում: Զարյանի գրականությունն էլ գալիս էր ասելու, որ **հայ պատմական շրջանի գլխավորագույն խնդիրը Հայաստան երկրի ու ժողովրդի գոյատեւումն է:** Հենց հանուն այդ խնդրի էլ ապրում ու գործում են նրա կերտած հերոսներն ու անձինք:

«Համայն հայկական թշվառությունը» անբաժան է եղել Կոստան Զարյանի հոգուց ու մտքից: Եվ նա գրել է՝ միշտ զգալով հոգեկան ու մտային մեծ պատասխանատվություն հայ կյանքի առջեւ: Գրել է ամենօրյա դառն ու սպանիչ դեպքերի թելադրանքով: «Կարողանալ երազածը իրականության վերածել՝ ինչպիսի տանջանք»,- գրել է նա «Կղզին եւ մի մարդ» գործում: Տանջանք, որ գալիս էր ազգային ցավերից, աշխարհի կործանաբեր ընթացքից, իր ապրած օրերի լլկումից, այն մտայնությունից, որ «կյանքը լավ կազմակերպված չէ», նաեւ ստեղծագործական այն որոնումներից, որ նպատակ ուներ արվեստի ճանապարհով հայտնաբերել այն, ինչը էական էր ու հավերժական: Կորսված կյանքի եւ կորսված մարդու վիճակը բեկվել է նրա ստեղծագործություններում, տարաբնույթ մեկնություններ ու ճյուղավորումներ ստացել, դարձել խնդիր ու ասելիք, գաղափար ու թեմա: Ադանայի կոտորածների լուրը Զարյանին ուղղակի ցնցել է: Այդ շրջանի իր ապրումների ու աշխարհի վիճակի մասին նա գրել է. «Ա՛հ, 909-ին աշխարհը ման էր գալիս չորս ոտքի վրա» *(«Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1918, հ. 12, էջ 18)*: Իսկ 1915-ի զանգվածային ջարդերի, կոտորածների ու աքսորների վերաբերյալ գրել է հակիրճ, սակայն շատ բնութագրական մի նախադասություն. «Գարուն, արյուն, արեւ եւ վիշտ: 1915»:

«Կրակի գույնով հողի այրվելը» այդուհանդերձ դարձել էր Զարյանի աշխարհըմբռնման հիմքը, եւ պատահական չէ, որ նրա մեջ կուտակվել էր «հավիտենական զայրույթը» առ աշխարհը, որը նրան հաճախ է տանում հակասական ապրումների ու խարազանող խոսքի, կորստյան եւ ընդվզման տրամադրությունների, իր խոսքով՝ «արցունքների բոցերի», որը նրան հանգեցնում է մենակության ամենակուլ գաղափարին՝ «մենակ ենք բորոտներու պես»: Եվ իսկապես, ջարդերից փրկվածները դժբախտ երջանիկներ էին, հոգով ու մարմնով կիսակործան բեկորներ: Բայց եւ անդին կար կյանքը, ժողովրդի ներքին կորովը, որը պիտի ապրեցներ մազապուրծ խլյակներին: Զարյանն այդ սերնդի մասին է գրել. «Տարաբախտ սերունդ է մեր սերունդը, նման ենք այն հավատացյալներին, որոնք ուզում են քանդված քաղաքի մեջ եկեղեցի շինել» *(«Բարձրավանք» հանդես, Կ. Պոլիս, 1922, Ա թիվ, էջ 3)*:

Հայ ոգու վերակերտման, հայ մարդու ազգային անբեկանելի իրավունքների, նրա մարդասիրական գաղափարների, անկախության, ինքնուրույնության ու ազատաբաղձության հենց այդ «եկեղեցաշինությանն» են նվիրված Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմը, «Անցորդը եւ իր ճամփան» հուշագրությունը, «Բանկոոպը եւ մամութի ոսկորները», «Նավը լերան վրա» վեպերը եւ տասնյակ ու տասնյակ այլ գործեր, որոնցում գրողի գեղագիտական մտասեւեռման կիզակետը միտված է ամեն ինչում հայկականի գերակայությանը: Այլ խոսքով՝ Զարյանի համոզումը եղավ ու մնաց այն գիտակցումը, որ ամեն մի հայ եւ ամբողջ ժողովուրդը պետք է գիտակցի իր պատմական դերը եւ պատասխանատվությունը **«ցեղի տեւական արժեքները ամեն բանից ավելի գերադասելու մեջ»** *(«Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, հ. 3, էջ 42, ընդգծումը - Ա. Ա.)*:

Անհատի կորստյան կամ կործանման ընթացքի խնդիրը նույնպես Զարյանի մշտական սեւեռման առարկան է եղել: Ուժեղ եւ ազատ անհատը, քաղաքական ու մշակութային ազատություն ունեցող անհատը գեղագիտական այն իդեալն է, որը պայմանավորում է մարդու եւ ազգի փրկության զարյանական հայեցակարգը: Գրողը կյանքի բարդ երեւույթների շուրջ մշտական խորհրդածությունների մեջ է մտել, պեղել մարդկային սիրտն ու միտքը, հասարակական ու ազգային հարաբերությունների դրսեւորումներում դիտել ազատության, իրավունքի ու պարտականության այն շրջանակները, որոնք պայմանավորում են կյանքի առաջընթացն ու ժողովուրդների իրավունքները: Ուժեղ անհատը, հանդուգն, հավատավոր ու նվիրյալ մարդը, հոգեպես հարուստ մարդը նաեւ իր երկրի կերպարանափոխող իշխանն է, մինչդեռ թույլ ու անկամ մարդը, իր հոգեւոր կյանքից հրաժարված մարդը, որը «շնչում է իրեն վիճակված քառակուսի մետր թթվածինը», իրեն միայն ծառա է զգում: Նրա հայրենասիրությունը իր ծննդավայրի հայրենասիրությունն է եւ ոչ թե հոգեկան վերացումի բարձրագույն գաղափար, որը պիտի հակազդի ընտանեկան, համայնքային ու կուսակցական չնչին մտահոգություններին: Դարեր շարունակ հայ մարդը ընդունել է հզոր Աստծո գաղափարը, բայց ոչ հզոր մարդու գաղափարը: Նրա իդեալը եղել է հորիզոնական լայնքը, մինչդեռ պետք է լիներ վերասլաց ընթացքը եւ ուղղահայաց խորքը, որը ժանգոտացրել է «հայ սրտի սուրը»: Նա աններող է եղել ու չի հանդուրժել «ստումը երկրի», չի հրաժարվել իր երկրից, բայց եւ չի ընդունել նրան այնպես, ինչպիսին նա եղել է: Նա տարել է իր հողերի ահավոր աղքատությունը, բայց երբ արտահայտվել է, իր ամբողջ ուժով գոռացել է ՝ «երկիր դրախտավայր»: 20-րդ դարն ապրում էր խոր դրամա, որից դուրս չէին մնացել ո՛չ անհատներ, ո՛չ էլ ժողովուրդներ: Նաեւ սա է պատճառը, որ գրողի հոդվածների ու գրությունների տիրապետող տարրը մերժման գաղափարն է, մինչդեռ գեղարվեստական գործերի պաթոսը հաստատման ոգին է:



Իր ամբողջության մեջ Զարյանի գրականությունը նաեւ մի ծանր պարսավ է՝ ուղղված ողջ մարդկությանը: Աշխարհն էլ նրա ստեղծագործություններում միշտ ներկայանում է որպես մի թատերաբեմ՝ լի պատերազմներով ու խարդավանքներով:

Զարյանը հաճախ է իրեն ու ուրիշներին հարց տվել՝ ո՞վ է հայ տիպար մարդը, եւ ո՞ւր է այդ տիպար մարդու կերպավորումը մեր գրականության մեջ, ո՞ւր են «այն գաղափարաբանությունները, որոնցով պետք է կառուցվի ազգի հոգեկան շենքը»: Այս եւ մի շարք այլ հարցերի մարմնավորման հաջողված օրինակ դարձավ գրողի «Նավը լերան վրա» վեպը, որտեղ հեղինակը վերակենդանացնում է ամեն բան, ինչ կապված է 20-րդ դարասկզբի Հայաստան աշխարհի «կծու, լեղի, թունավոր» վիճակի, նրա քար ու լեռան, հող ու ջրի, ժողովրդի անցած ու անցնելիք բարդ ուղիների, նրա ընթացիկ օրերի ու վառ երազանքների հետ: Վեպ, որ հաստատումն է դառնում հայ մարդու կամքի ու պայքարի վճռականության, բարձրագույն եւ ազատ կամքով ապրելու նրա իրավունքի:

Քաղաքական ու տնտեսական հրաբուխների վրա գտնվող Հայաստան աշխարհում ապրելը չարքաշ ճակատագիր է, տեւական կռիվ ոչ միայն թշնամիների, այլեւ ամայի հողերի ու կարծր քարերի դեմ. «... մինչդեռ ուրիշ երկրները կերակրում են իրենց վրա ապրող ժողովուրդներին, էստեղ հայ ժողովուրդը պետք է կերակրի իր երկրին...» *(Կ. Զարյան, Նավը լերան վրա, Բոստոն, 1943, էջ 36)*: Ամեն անգամ հայ մարդն իր խրճիթից դուրս է եկել պայքարի համար՝ պայքար բնության, իրար հաջորդող թշնամիների, հողերի կարծրությունների, ճակատագրի հարվածների դեմ. «Դար դարի հետեւից գալիս անցնում է, եւ թշնամիները միշտ նոր են ... Թամերլան, Չինգիզ Խան, արաբներ, թաթարներ, տաճիկներ, սելջուկներ, աֆղաններ, պարսիկներ... գալիս ավերում են, այրում, քանդում, անցնում, իսկ ինքը՝ հայ ժողովուրդը՝ հողի հետ հող, ժայռի հետ ժայռ, նստած սպասում է» *(Նույն տեղում, էջ 418)*: Այսպես նա միշտ մենակ է իր ժայռերի հետ, ու նրա հավատարիմ դաշնակիցները ցուրտն ու սովն են, համաճարակներն ու ոռնացող քամիները: Հայաստանը մի վայր է, ուր «մարդկային մարմին եւ տառապանք է հոտում»: Զարյանն իր վեպում մատնանշում է նաեւ այն գերհզոր լավաները, որոնք փոթորկվում են հայ կյանքի ընդերքում: Ի հակադրումն համատարած թշվառությունների՝ հայ մարդը շարունակում է հավատարիմ մնալ իր բաղձանքներին, բանակը կռվում է, ժողովուրդը՝ ցավը երգի վերածում: Հայ իրականությունը պետք ունի թե՛ զենքով կռվող հերոսների եւ թե՛ մանավանդ մտավոր ազնվական մարդկանց, եւ նա ծնել է գործունյա մարդկանց, տվել ամեհի կռվողներ, նաեւ՝ գաղափարի նվիրյալ մարդիկ:

*Շարունակությունը՝ էջ 6*

---

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ

## (1655-1680)

*Սկիզբը՝ էջ 3*

Օգնության չեկավ նաեւ Հակոբ կաթողիկոսը, որն ստիպված էր պայքարել հակաթոռության դեմ: Դրան գումարվեց իտալական գրաքննությունը, որը գրգռվում էր Լվովից վերադարձած Փիթուի ջանքերով: Նա շատ էր կատաղած Ոսկանի դեմ՝ տեսնելով Առաքել Դավրիժեցու պատմության հրատարակությունը, քանի որ դրանում ծաղկված էին հռոմեադավանությունը եւ Նիկոլի գործերը: Ոսկանը, որ Ամստերդամում 19 գիրք էր հրատարակել, այստեղ ընդամենը 2 գիրք տպեց: Հետո նա ստիպված եղավ գնալ Մարսել եւ տպագրությունն սկսել միայն 1673 թվից: Պապականությունն ամենուրեք հալածում էր նրան: Նա նույնիսկ արտաքուստ հռոմեադավան դարձավ, որ տպագրության գործը շարունակվի: Այդ պատճառով էր, որ փոփոխություններ մտցրեց իր տպագրած ծիսարանի մեջ, ինչը մեծ ուրախություն էր պատճառել հռոմեադավաններին: Նա պարզապես ստիպված էր եղել համակերպվել: Ոսկանը մահացավ Մարսելում՝ 60 տարեկան հասակում, երբ նա դեռ կարող էր շատ գործեր կատարել: Ոսկանին հանդիպեց մի նենգամիտ ընկերակից՝ Թադեոս Համազասպյանը, որ երեւանցի էր, սակայն ծնունդով՝ սպահանցի: Նա հարել էր Ոսկանին Ամստերդամում, աշխատել նրա հետ Լիվոռնոյում եւ Մարսելում, սակայն նպատակը եղել էր տպարանը փչացնելը եւ գիտության լույսը մարելը: Այդպես են նրան բնութագրել նրան ճանաչող զմյուռնացիք, որոնք նրան արժանի չէին համարում անգամ քրիստոնյա կոչվելու: Թերեւս նա դեր էր կատարել Ոսկանի դժվարությունների մեջ: Նրա նենգության պսակը հանդիսացավ 1673-ին Ոսկանին մեղադրելը նոր տպագրվող Ժամագրքում հերետիկոսության մասեր պարունակելու մեջ: Նա գործը հասցրեց պետական եւ կրոնական ատյաններին, եւ դրանից շատ չանցած՝ 1674-ի սկզբներին, Ոսկանը մահացավ: Հանուն հայ տպագրության՝ նա վատնեց իր ողջ կյանքը, չնայած, որպես արքեպիսկոպոս, կարող էր ապրել ճոխության մեջ: Անշուշտ, նա հայ նշանավոր երախտավորներից էր: Հակոբ Մեղապարտի հրատարակությունները 1512 եւ 1513 թվականներին միայն ժամանակագրական փառք ունեցան, բայց մեծ օգուտ չբերեցին: Մեծ հետք չթողեց նաեւ Աբգար Եվդոկացու տպագրական գործունեությունը: Սակայն Ոսկանի գործը նրա մահից հետո էլ շարունակվեց ու զարգացավ: Նրա քեռորդին՝ Սողոմոն Լեւոնյանը, ազգականը՝ Պետրոս Լատինացին, աշխատողը՝ Նասիբ Գրիգորյանը, գրաշարը՝ Մատթեոս Վանանդեցին, եւ նույնիսկ նենգամիտ Թադեոս Երեւանցին դարձան տպարանների վարիչներ Մարսելում, Կ. Պոլսում, Ամստերդամում եւ Վենետիկում: Գնալով ընդարձակվեց հայկական տպարանների ցանցը, եւ մեծացավ արդյունքը: Հռոմեադավանները Ոսկանին համարում են իրենց համախոհ, սակայն քննությունը ցույց է տալիս, որ այդ անունն առերես էր՝ բռնադատյալ: Արդեն նրան ամբաստանելը խոսում է նրա հայադավանության եւ ոչ թե հռոմեադավանության մասին: Գերեզմանն անհայտ է, ինչը եւս վկայում է, որ նրա հիշատակը չէր հետաքրքրում հռոմեադավաններին:



Ոսկան Երեւանցուն է վերագրվում Հայոց Եկեղեցու նվիրապետության վիճակագրական ցուցակը: Նա այդ ստեղծել է՝ հետեւելով Արեւմուտքի Եկեղեցիներին: Գուցե այդ ցուցակը ճիշտ պատկերը չէ իրական կացության, քանի որ նման ցուցակներ, դժբախտաբար, մեզ չեն հասել: Իսկ շատերի կարծիքով Հայոց Եկեղեցին այդպիսի կացություն չի ունեցել: Անշուշտ, հազիվ թե Հայոց Եկեղեցին այդպիսի ցուցակ չունենար, ինչը ցույց են տալիս պատմական փաստաթղթերը: Սակայն, այսուհանդերձ, կանոնավոր ցուցակները բացակայում են: Համենայն դեպս, դրանք կարծես թե չկային Ոսկանի ժամանակ: Նա պարզապես կամեցել է Հայոց Եկեղեցին ներկայացնել լատինական աշխարհին կարգավորյալ կացությամբ եւ իրականը մերձեցնելով կանոնականին՝ ցուցակ է կազմել: Ցուցակը պահպանվել է միայն լատիներենով, եւ չի բացառվում, որ հայերեն բնագիր չի էլ ունեցել: Հայոց Եկեղեցու թեմերը բաժանվում են երկու կաթողիկոսությունների՝ Էջմիածնի եւ Սսի միջեւ: Աթոռների թիվը 138-ն է, որից 47-ը՝ արքեպիսկոպոսական, եւ 91-ը՝ եպիսկոպոսական: Սակայն ցուցակում նահանգ ներկայացնող արքեպիսկոպոսարաններն ընդամենը 17-ն: Հիշվում են նաեւ պատվակալ արքեպիսկոպոսարաններ:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

*Սկիզբը՝ թիվ 1*

Հայության համար անչափ կարեւոր է նաեւ հայոց ինքնության եւս մեկ հիմնասյան՝ Հայոց պետականության գոյությունը մայր հողում: ***Հարկ է մշտապես պահպանել կապը ՀՀ, ԼՂՀ եւ ազգային եկեղեցու հետ***: Պետք է չմոռանալ, որ ՀՀ-ում, ԼՂՀ-ում եւ Սփյուռքում ապրող հայությունը մեկ ամբողջություն է կազմում: Յուրաքանչյուրս պարտավոր ենք մշտապես հիշել այս իրողության մասին եւ պետք է մեր լուման ներդնենք միասնության ամրապնդման գործում: ***Միայն միաբանված լինելով է, որ տրվում են հաղթանակները, միայն միաբանված լինելով կարող ենք ստիպել աշխարհին՝ հաշվի նստել մեզ հետ, եւ միայն միաբանված լինելով է, որ մեր ազգը կարող է կերտել իր հզոր ապագան, որի խոսուն երաշխիքներից է նաեւ Հայոց բանակը:***

Վերջինիս գոյությունը եւս պետք է գիտակցված լինի Սփյուռքում՝ հայրենիքին ծառայելու հնարավոր միջոց հանդիսանալով նրանց համար:

Միաբանվածության հասնելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է ազգային ինքնագիտակցության սերմանումը սփյուռքահայության շրջանում, քանի որ, առանց ազգային ինքնագիտակցության առկայության, համազգային կամ գոնե ներհամայնքային միասնականության հնարավոր չէ հասնել: Անգամ զտարյուն հայը կարող է ինքնամեկուսացման ենթարկվել



հայ էթնիկ ընդհանրությունից, եթե նրա մոտ բացակայում է ազգային ինքնագիտակցությունը:

Ազգային ինքնագիտակցության սերմանման համար անհրաժեշտ է իրականացնել ռազմահայրենասիրական դաստիարակություն, եւ այն պետք է իրականացնել ոչ միայն Սփյուռքի առավել հայաշատ ու առավել կազմակերպված համայնքներում, այլ նաեւ այն համայնքներում, որտեղ ուծացման շատ լուրջ վտանգ կա: Ընդ որում՝ ռազմահայրենասիրական դաստիարակություն Սփյուռքում նշանակում է ոչ թե ազգայնական-միլիտարիստական գաղափարախոսական մտքերի տարածում, որը հղի է շատ լուրջ վտանգներով եւ կործանարար հետեւանքներ կարող է ունենալ, այլ ազգային արժեքների եւ ազգային ինքնագիտակցության մշտնջենական սերմանում ու պահպանում, ինչը համազգային գոյության երաշխիքն է:

Վերադառնալով համայնքային առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ հենց դրանցով են պայմանավորված ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման առանձնահատկությունները սփյուռքահայ զանազան համայնքներում: Ազգային արժեքների ընկալման մեծ տարբերություններ կան, օրինակ՝ Մերձավոր Արեւելքի, Լատինական Ամերիկայի, Արեւմտյան Եվրոպայի եւ այլ տարածաշրջանների հայության շրջանում: Եվ դեռ ավելին, սրանց ներսում էլ յուրաքանչյուր հայկական համայնքում ազգային ինքնագիտակցության դրսեւորումները տարբեր կերպ են արտահայտվում:

Սփյուռքահայ համայնքներում նման տարբերությունները ցույց տալու համար առանձնացրել ենք մի շարք հանգամանքներ, որոնք էլ, մեր կարծիքով, պատճառ են հանդիսանում, որպեսզի այսօր մարտահրավերներ լինեն Սփյուռքում ազգային ինքնագիտակցության համար.

1. *Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը*, օրինակ՝ Իրանի հայ համայնքում դարեր շարունակ ձեւավորված են ազգապահպանման սեփական մեխանիզմները, որոնցով համայնքը, չնայած մեծ ծավալների հասնող արտագաղթին, կարողանում է պահպանել սեփական ազգային դիմագիծը, մինչդեռ 20-րդ դարի վերջին ՀՀ-ից, օրինակ, ՌԴ մեկնած հայերի հոծ խմբեր հիմնեցին նոր համայնքներ ՌԴ-ի տարբեր մարզերում, որտեղ, սակայն, համայնքի գոյապահպանման ընդհանուր մեխանիզմներ գոյություն չունեն:

2. Էթնիկական համայնքի գոյապահպանման ընդհանուր մեխանիզմներ կարող են ի հայտ գալ միայն *համախումբ եւ ընդհանրացված (ինքնաինտեգրված) բնակության պայմաններում*, երբ որեւէ երկրում կամ դրա որեւէ վարչամիավորում բնակվող հայությունն ապրում է ընդհանուր նորմերով: Պատահական չէ, որ մինչեւ Հայոց Ցեղասպանությունը, այսինքն՝ հայության հախուռն մուտքն աշխարհի շատ ու շատ երկրներ, հայկական համայքներն ստեղծում էին սեփական կանոնադրություն:

3. Կարեւոր է ոչ միայն համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը, այլ նաեւ այն հանգամանքը, թե երբ եւ որտեղից են տվյալ հայ համայնքի առանձին հատվածներ հաստատվել տվյալ երկրում, այսինքն՝ համայնքի ծագումը՝ ըստ *հայության տարբեր խմբերի հաստատման ժամանակաշրջանի եւ նախորդող բնակության վայրի*: Չէ՞ որ հայկական համայնքների մեծ մասում հայությունը ոչ թե միեւնույն երկրից կամ մարզից է եկել եւ հաստատվել, այլ տարբեր ժամանակաշրջաններում եւ տարբեր երկրներից ու մարզերից: Այսպիսի խառը ծագումնաբանություն ունեցող հայ համայնքի փայլուն օրինակ է Լոս Անջելեսի հայ համայնքն ԱՄՆ-ում, որտեղ կան ե՛ւ Ցեղասպանությունից առաջ հաստատված հայերի սերունդներ, ե՛ւ Ցեղասպանության հետեւանքով այստեղ հայտնվածների հետնորդներ, ե՛ւ աշխարհի զանազան տարածաշրջաններից (Մերձավոր Արեւելք, Լատինական Ամերիկա, ԱՊՀ) ու ՀՀ-ից հաստատված հայեր: Նրանց միջեւ կապերը շատ ավելի թույլ են, քան այդ յուրաքանչյուր խմբի ներսում, ուստի համընդհանուր ազգային արժեքների սերմանումն այս խմբերի շրջանում պետք է իրականացնել միեւնույն ուղղությամբ, այսինքն՝ դեպի համազգային-վերխմբային ինքնագիտակցության առաջացումը, սակայն տարբեր եղանակների կիրառմամբ, որոնք չեն կարող նույնը լինել բազմաշերտ եւ տարասեռ համայնքներում:

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՀԱՎԱՏ ԱՌ ԱՍՏՎԱԾ ԵՎ ԱՌԱՆՑ ԾԱՎԱԼԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԵՏԸ

Երբ Հայաստանը զարգացած էր՝ հայոց մտքի, արարման ու ապրումի բարձունքի դարաշրջանում, աստվածաբան էր համարվում բազմակողմանի կրթված եւ զարգացած հոգեւորականը: Նա տեղյակ էր ժամանակի եռյակ եւ քառյակ գիտությունների հայտնի տեսություններին, նա կարող էր ժամանակի խնդիրներին կրոնագիտական լուծումներ առաջարկել, նա տրամաբան էր ու հմուտ խոսքաշեն եւ տիրապետում էր, այժմ արդեն ով գիտե՝ ինչպիսի՜ բանավոր փոխանցվող խորհրդավոր գիտելիքների: Այդ փառահեղ ժամանակներում աստվածաբանի մտքով չէր էլ կարող անցնել (ինչպես՝ հիմա) սահմանել այս գիտության օբյեկտն ու սուբյեկտը:

Եթե աստվածաբանությունը բաժանենք միայն երկու մեծ ճյուղի՝ կրոնագիտության եւ վարդապետության, եւ կրոնագիտության օբյեկտ դիտարկենք կրոնական աշխարհայացքները, նմանություններն ու տարբերությունները եւ այլն, ապա վարդապետական ճյուղի համար մեծ խնդիր կմնա աստվածճանաչողության՝ ժամանակակից գիտական ոճով ձեւակերպումը: Կարո՞ղ է արդյոք Աստված լինել «ճանաչողության օբյեկտ», կարո՞ղ է արդյոք աստվածաբանը՝ գիտնականը՝ մարդը, ճանաչել Նրան, ի՞նչ մեթոդներով, ի՞նչ միջոցներով, ինչպե՞ս:

Այս մասին առկա գրականության ծավալն ահռելի է՝ սկսած երրորդ դարի բանավեճերից, մինչ օրս համացանցային ֆորումներում ընթացող քննարկումները: Ես այսօր կկամենայի ներկայացնել առհասարակ գիտական ճանաչողության խնդիրն այնպես, ինչպես դա տեսել են բազմաթիվ հայտնի գիտնականներ: Նրանցից շատերը, դիտարկելով կրոն-գիտություն հարաբերությունը, նկատել են, որ գիտության ցանկացած ճյուղի հիմքում, ինչպես կրոնում, հավատն է: «Մաթեմատիկոսներն այն կոչում են աքսիոմ՝ չապացուցվող դրույթ, մինչդեռ դա գիտությունների թագուհու հիմքն է,- «Մեր ճանաչողության սահմանը» դասախոսության ընթացքում ասում է ռուս աստվածաբան Ալեքսեյ Օսիպովը,- դե, դուք ասեք, օրինակ, հնարավո՞ր է առանց ծավալի նյութական կետ ունենալ»: «Հավատը ֆիզիկոսի աչքերով» գրքի առաջաբանում նշվում է, որ ամենամեծ գիտական հայտնագործությունները փորձով հաստատվելուց հետո մինչեւ տեսական հիմնավորում ստանալը մեծ ճանապարհ են անցնում, եւ երբեմն այդ ընթացքում դրանք կիրառվում են կենցաղային արտադրության մեջ. կիրառողները, բնականաբար, չեն հասկանում, թե ինչ երեւույթի հետ գործ ունեն, սակայն... հավատում են: «Ընկալող սուբյեկտից անկախ արտաքին աշխարհի գոյությանը հավատալն ընկած է բնական գիտությունների հիմքում»,- գրել է Էյնշտեյնը («Գիտական աշխատությունների ժողովածու» Մոսկվա, 1967, գիրք IV, էջ 136): Ընկալելի իրականության ո՞ր մասն է հնարավոր բացատրել, նշել, ներկայացնել, հասկանալ: Արդյո՞ք դա՝ այդ հասկանալի ներկայացվածն է իրականը: «Ես չեմ կարծում, որ հիմա քնած եմ եւ երազ եմ տեսնում. այնուամենայնիվ, դա ապացուցել չեմ կարող»,- ասել է Բերտրան Ռասելը («Մարդկային ճանաչողությունը», Մոսկվա, 1957, էջ 204):

Գիտության «աշխատանքային գործիքների»՝ մեթոդների սահմանափակության մասին խոսել են նույնիսկ աշխարհաճանաչողության այս տեսակը խիստ գերագնահատողները: Դիտարկենք բնական գիտությունները, քանի որ դրանք են համարվում օբյեկտիվ՝ ի տարբերություն հումանիտար-սուբյեկտիվների: Դրանց մեթոդներն են դիտարկումը, փորձը՝ էքսպերիմենտը, չափումն ու եզրահանգումը՝ որպես հիպոթեզ կամ տեսություն: Մինչեւ վերջերս դիտարկումը համարվում էր մեթոդներից ամենաարժանահավատը՝ որպես աշխատանք, որի ընթացքում գիտնականը՝ տարանջատված օբյեկտից, միայն կողմնակի դիտող է՝ սուբյեկտ: Սակայն հիմա առավել տիրապետող է դառնում այն կարծիքը, որ նույնիսկ դիտարկման դեպքում մարդն անկախ սուբյեկտ չէ, այլ մասնակից: Նա իրադրության ստեղծմամբ, սարքավորումներով, եւ վերջապես, իր ներկայությամբ դառնում է գործընթացի անմիջական մասնակից՝ բացառելով օբյեկտի ճշմարտացի ներկայացման եւ վերլուծման հնարավորությունը: Այսպես, առավել սուբյետիվ են դառնում փորձը, չափումը եւ, իհարկե, արդյունքների ամփոփումն ու եզրահանգումը: Այստեղ գիտնականի բնավորությունը, այս գիտափորձի նկատմամբ տրամադրվածությունը եւ այլ անձնական որակներ հսկայական ազդեցություն են ունենում: «Առանց հավատալու, որ կարող ենք ընկալել իրականությունը մեր տեսական վերացարկումներով, առանց հավատալու մեր՝ այս աշխարհի ներքին ներդաշնակությանը, ոչ մի գիտություն չի կարող լինել: Այդ հավատը եղել է եւ միշտ կլինի ցանկացած գիտական աշխատության հիմքում»,- ասել է Էյնշտեյնը («Գիտական աշխատությունների ժողովածու», Մոսկվա, 1967, գիրք IV, էջ 154): Այսպես, մարդ արարած - գիտնականն իր համար ուրվագծում է իր ճանաչողության օբյեկտը եւ դիտարկում այն՝ դրա համաձայն: Իսկ ամբողջական համակարգում ուղենշում է իր կյանքի, միջավայրի, աշխարհի ընթացքը, գիտական զարգացման ուղղությունը եւ իր աշխատանքին նայում այդ տեսանկյունից: «Գիտության մեջ այն ամենը, ինչ ծառայում է նրա զարգացմանը, ընդունվում է որպես ճշմարտություն, իսկ այն ամենը, ինչ խանգարում է՝ սխալ: Այս տեսանկյունից ճշմարիտը համարժեք է տրամաբանականին... Եվ գիտության մեջ ճշմարտությունն այն ամենն է, ինչը տրամաբանական է, ինչն արդարացվում եւ հաստատվում է փորձով, որը կարող է նպաստել գիտության հետագա զարգացմանը: Օգտավետությունը դառնում է չափանիշը պետքականության, այսինքն՝ ճշմարտության: Մարդուն՝ ճշմարտության ճանաչման այլ ձեւ հասու չէ... ճշմարտությունն օգտակարն է, սխալը՝ վնասակարը,- գրում է Լ. Բերգը՝ ամփոփելով,- այսպես, մենք սահմանեցինք, թե ինչ է ճշմարտությունը գիտության տեսակետից» (Լ. Բերգ, «Գիտությունը, նրա բովանդակությունը, իմաստը եւ կառուցվածքը», Պրահա, 1922, էջ 18-23):



Աներկբա է, որ արդի ամենաօբյեկտիվ գիտությունն անգամ «մի քիչ» սուբյեկտիվ է, մի քիչ իր մեջ է առել իրեն դիտարկելու պայմաններ ստեղծած գիտնականից, իրեն մշակողից, վերլուծողից ու զարգացնողից: Արարված աշխարհի եւ նրա օրենքների ճանաչողության այս փորձերն ինչ-որ չափով ներշնչված են դրանք իրականացնողի տրամադրությամբ, մտավոր, բարոյական եւ հատկապես հոգեւոր վիճակով:

*Շարունակությունը՝ էջ 7*

Կիզակետում

# ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

# «ԱՆԽԻՂՃ ՊԱՐՏԱՊԵՐ ԾԱՌԱՅԻ ԱՌԱԿԸ»

*(Մատթ. ԺԸ 23-35)*

## Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

**- Միայն Մատթեոսի Ավետարանում հանդիպող այս առակը նույնպես սկսվում է «Երկնքի արքայությունը նմանվում է…» արտահայտությամբ, սակայն այդ արքայության արժանանալու համար այստեղ Հիսուսը շեշտադրում է խիստ որոշակի քրիստոնեական մի առաքինություն՝ ներումը, ներողամտությունը: Առակն ուղղակի եւ ակնհայտորեն հիշեցնում է «Հայր մեր»-ի ամենակարեւոր եզրերից մեկը. «Թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպես եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Այսինքն՝ ներողամտության եւ ողորմածության աղաչանք Աստծուց, եւ նույնի պատրաստակամությունը յուրաքանչյուրիս կողմից՝ այլոց հանդեպ:**

- Աստվածաշունչը լեցուն է ներողամտության վերաբերյալ աստվածային այս պատգամով: Սակայն գրեթե միշտ էլ այն ուղեկցվում է զգուշացումով, որ առանց եղբորը ներելու անհնար է ներում գտնել: Անշուշտ, ներողամտությունը, գթասրտությունը այս առակի ուսուցման գլխավոր գծերն են՝ այն համոզմամբ, որ ես ինքս մեղավոր եմ: Ներել կարողանալու համար հոգեմտավոր լուրջ հիմք է անհրաժեշտ. եթե մեկը մտածեց, որ ինքը մեղք չի գործել, որ ինքը չի կարող սխալվել, նման մարդը երբեւէ չի կարող անկեղծորեն ներել դիմացինին: Սա մարդկային հոգեբանության մի կարեւոր հատկանիշ է. իր մասին անսխալական կարծիք ունեցող մարդը, երբ տեսնում է ուրիշի սխալը, միանգամից սկսում է հանդես գալ դատավորի դերում: Իսկ ներումն սկսվում է սեփական մեղքը գիտակցելուց: Չէ՞ որ իրականության մեջ ոչ մի արդար մարդ չկա՝ ավետարանական չափանիշներով: Ուրեմն նաեւ չներելու իրավունք չպիտի ունենա որեւէ մեկը: Այս միտքն առանցքն է առակի:

Այս առակում մենք գործ ունենք երեք հիմնական գործող անձանց հետ: Առաջինը թագավորն է, որ կամեցավ իր հաշիվները պարզել ծառաների հետ: Երկրորդը պարտապան ծառան է, ով շատ մեծ պարտք ուներ թագավորին. 10000 քանքար, մյուսը նրա ծառայակիցն է, որն արդեն իրեն էր պարտք՝ ընդամենը 100 դահեկան՝ 10000 քանքարի դիմաց չնչին մի գումար: Ծառայի պարտքի մեծության մասին կարելի է պատկերացում կազմել հենց առակի տեքստից. պարտքի դիմաց «նրա տերը հրամայեց վաճառել նրան, նրա կնոջն ու որդիներին եւ այն ամենը, ինչ նա ուներ, եւ պարտքը հատուցել» (Մատթ. ԺԸ 25): Այսպիսի դաժան պատիժ էր սպասվում պարտապան ծառային, եթե տերն աններող լիներ: Սակայն երբ ծառան ընկավ տիրոջ ոտքերը, աղաչեց, պաղատեց, որ տերը համբերող լինի՝ խոստանալով ժամանակի ընթացքում բոլոր պարտքերը վճարել, տերը ոչ միայն համբերեց, այլեւ արեց այն, ինչ ծառան չէր էլ կարող երազել. «գթալով արձակեց նրան եւ պարտքը նրան շնորհեց»: Ասել է թե՝ զիջեց, մոռացավ, նվիրեց՝ դրանով կործանումից ուղղակիորեն փրկելով ծառային եւ նրա ողջ ընտանիքը: Հասկանալի է, որ առակում թագավորը երկնավոր Հոր խորհրդանիշն է. լսեց աղաչանքը եւ շնորհեց: Իսկ ի՞նչ արեց ծառան: «Իսկ ծառան դուրս ելնելով՝ գտավ իր ծառայակիցներից մեկին, որ իրեն հարյուր դահեկան էր պարտք: Եվ նրան բռնելով՝ խեղդում էր ու ասում. «Վճարի՛ր ինձ, ինչ որ պարտք ես» (Մատթ. ԺԸ 28), Ահա՛ թե ինչ… Թվում է, թե այն բանից հետո, ինչ կատարվեց իր հետ, նա այնքան պիտի ուրախանար, աշխարհով մեկ լիներ, այնքան բարի ու ներողամիտ պիտի դառնար, որ մնացած ողջ կյանքում միմիայն բարի ու առաքինի գործերով պսակեր իր անունը՝ դրանով իսկ փառավորելով Աստծուն, որ տերն այդպես ներողամիտ գտնվեց իր հանդեպ: Բայց արի ու տես, որ նույնիսկ լսել չուզեց իր ընկերոջ աղաչանքը, այլ «գնաց նրան բանտ նետել տվեց, մինչեւ որ պարտքը վճարեր» (Մատթ. ԺԸ 30): Եվ բնական է, որ տերը պիտի զայրանար ծառայի այդքան տմարդի վարմունքից ու հանդիմաներ. «Չա՛ր ծառա, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի նրա համար, որ աղաչեցիր ինձ, իսկ պետք չէ՞ր, որ դու էլ գթայիր քո ծառայակցին, ինչպես ես էլ քեզ գթացի» (Մատթ. ԺԸ 32-33): Բնական է, որ ներելով ծառայի անհաշիվ պարտքերը՝ տերը (Աստված) նույն ակնկալիքն ուներ ծառայից, որ գոնե այդ փոքրիկ պարտքը զիջեր: Ու քանի որ չարեց, ուրիշ բան չէր մնում տիրոջը, քան նրան հանձնել դահիճներին:

**- Տե՛ր հայր, սբ Գրիգոր Նարեկացին ասում է՝ Աստված մեզ իշխանություն տվեց մեր մեղքերի թողության համար: Ի՞նչ իշխանության մասին է խոսքը:**

- Սա, թերեւս, երկու իմաստով պետք է հասկանալ: Ասվածը նախ եւ առաջ քահանայական իշխանությանն է վերաբերում, որ Ինքը՝ Հիսուս Քրիստոսը տվեց Իր առաքյալներին, սրանք էլ՝ իրենց աշակերտներին, եւ այդպես՝ ձեռնադրությամբ ու աստվածային իշխանության փոխանցմամբ հասավ մինչեւ մեր օրերը: Եվ հետաքրքիր է, որ Աստված քահանյության, մեղքերի թողության ու քավության համար չընտրեց հրեշտակներին, այլ մարդկանց: Ինչո՞ւ: Որովհետեւ միայն մարդը, նույն տկարություններով օժտված էակը կարող էր հասկանալ դիմացի մեղավորին՝ իր նման մարդուն, մինչդեռ հրեշտակները չպիտի հասկանային ու դաժան դատավորներ պիտի լինեին: Իսկ Աստված մարդկանց կործանումը չի կամենում, նրանց մահը չի ցանկանում, այլ փրկությունը, որ լինում է անկեղծ զղջումով ու ապաշխարությամբ: Մարդկանց միջից ընտրված քահանաները, նրանցից յուրաքանչյուրը այդ պատերազմը պատերազմել է, հաճախ սայթաքել վայր է ընկել եւ ապաշխարությամբ ու աղաչանքով նախ եւ առաջ իր անձն է բուժել: Նարեկացու նման սուրբն ասում էր. «Ես բոլոր մեղավորներից ամենահետինն եմ»: Ճիշտ այդպես պետք է մտածի մեղքերի թողության իրավունք ունեցող անձը՝ քահանան, եւ նա չի կարող աններողամիտ չլինել: Ինչ վերբերում է երկրորդ իմաստին, սա, թերեւս, փոխադարձ ներողամտության պարզ, մարդկային իշխանությունն է, ինչը կյանքում հաճախ է պատահում, երբ մարդիկ իրար վիրավորում են խոսքով, գործով, անարդար ու անիրավ բաներ անում միմյանց հանդեպ: Դրանցից յուրաքանչյուրը մի առիթ է, որ մարդը կա՛մ բորբոքվի, ատելությամբ գրգռվի, չների, կա՛մ հասկանալով, որ վիրավորանքի, անիրավության պատճառն այն էր, որ ինքը (կամ՝ նաեւ ինքը)



սխալվեց, առաջինն ինքը ներում հայցի դիմացինից: Իսկ եթե դիմացինը չի ուզում ներել, ուրեմն դիտավորություն ունի, ուրեմն ուզում է «թույլ կողմին» առավել ստորացնել, ինչպես որ տեսնում ենք առակի մեջ. «բանտ նետել տվեց»: Ուզում եմ՝ յուրաքանչյուր մարդ գիտակցի, որ չներողը դիվային գործ է անում:

**- Ոմանց համար էլ «ներողություն» բառն արտասանելը շատ դժվար, գրեթե տաժանակիր գործ է: Եթե անգամ համոզված են, որ մեղավոր են, շուրթերը կարծես չեն բացվում՝ ասելու համար այդ բառը՝ գոնե իրենց խղճի հանգստության համար: Նույն մարդը, սակայն, բացում է շուրթերը, եթե, ասենք, վախենում է ինչ-որ բանից կամ ինչ-որ մեկից: Սրա՞ն ինչ կասեք, տե՛ր հայր:**

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԻ ՄԱՐԴ

## Կոստան Զարյանի ծննդյան 125-ամյակի առթիվ



*Սկիզբը՝ էջ 4*

«Նավը լերան վրա» վեպի շատ հերոսներ հենց այդպիսի կերպավորումներ են ստացել Զարյանի գրչի տակ՝ Արա Հերյանը, Բաքկեն Միրանյանը, կապիտան Թումանյանը եւ այլք, ովքեր գերմարդիկ չեն, այլ մտածող ու գործնական իսկական հերոսներ, որ անում են կարելի ամեն բան՝ երկրին օգտակար լինելու համար, որ գիտեն գնալ նպատակի հետեւից, պատրաստ են զոհողության, նման մեր պատմության ազնիվ հոգիներին՝ ազգային գործիչներ, մտավորականներ, կրոնավորներ, ովքեր. «Լուրջ, տխուր դեմքերով, խնամված փողկապներով, ակնոցների ետեւից երազուն աչքերով նայող, ոլոր մորուքներով, սեղմված շրթունքներով մարդիկ էին, **որոնց դաժան եւ հավատավոր կյանքերը ջահի նման վառվել էին ազգային պատմության խավար լաբիրինթոսներում**» *(նույն տեղում, էջ 244, ընդգծումը - Ա. Ա.)*:

Նրանք, հենց նրանք են Զարյանի առաջադրած «ո՛վ է հայ տիպար մարդը» հարցին պատասխանողները: Սերը եւ մահը, ավերումը եւ արարումը: Ի՞նչ կլիներ հայ ժողովուրդը, եթե նրա պատմության ճակատագրական պահերին խավարի միջից չբոցկլտային այդ հոգիները: Ողջ վեպի ընթացքում էլ գրողի համար մի չափանիշ է մնում՝ գործող անձանց մարդկային հատկանիշները բնութագրել նրանց ազգային գործունեությամբ, նրանց հոգեկան բարձրությամբ ու ինքնազոհողության պատրաստակամությամբ, որոնք էլ ազգային հաղթանակի գրավականներն են: Այսպիսով՝ վեպի գլխավոր ասելիքը հանգում է մի գլխավոր մտքի՝ ազգային փրկության այլ ճանապարհ չկա, քան ինքնուրույն պետականության ստեղծումը, որը լինելու է դժվարընթաց մի ուղի՝ լի փոխնիփոխ զոհողություններով ու հաղթանակներով:

Կոստան Զարյանի մեջ, որպես գիտակցված հակադարձում իր եւ իր գրականության նկատմամբ շրջապատի ցուցաբերած միտումնավոր վերաբերմունքի եւ առհասարակ որպես ապրելու ձեւ, եղավ ու մնաց անմնացորդ նվիրումը Հայաստան աշխարհին: Հայաստանի կերպարն էլ որպես լուսավոր մի տեսիլ հար անբաժան մնաց նրանից՝ ամենամեծ ու ընդգրկուն խորհրդանիշը նրա գրականության մեջ, այն ամենը, ինչ որ կապված էր բարձրին ու ազնիվին: Եվ պատահական չէ, որ նա գրել է, թե ամենակարեւոր բանը, որ կանգնած է հայության առջեւ, հայ պետականության ստեղծումն է: Նրա մեջ շատ բան էր փոխվում, բայց երբեք չէր փոխվում նվիրումը իր երկրին: «Էդ հայություն ասվածը ի՞նչ սոսկալի բան է եղել»,- գրել է նա՝ համոզված, որ այն ամեն ինչ պարուրող սեր է, ոգու կանչ, մարդկային կոչում. «Նա ես եմ, ես նա եմ»: Մայր հայրենիքի նկատմամբ ունեցած իր մեծ սերը նա շատ պատկերավոր է բանաձեւել «Անցորդը եւ իր ճամփան» գրքում. «Մենք փնտրել ենք հայրենիքը, ինչպես թիթեռնիկը փնտրում է ճրագը, որի վրա պիտի այրվի» *(«Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, հ. 5, էջ 22)*:

Կարելի է ասել, որ Զարյանի համար ողջ կյանքի ընթացքում հնչել են «Բանկոոպը եւ մամոթի ոսկորները» վեպի հերոսներից մեկի՝ Գյուտ վարդապետի խոսքերը. «Հայո՛ց աշխարհ, Հայո՛ց աշխարհ: … Ես ապրել եմ քեզ հետ եւ քեզ համար, շնչել եմ քո շնչովդ, տառապել եմ քո տառապանքներով, ուրախացել եմ քո ուրախություններով: Այստեղ չէ՞ այն Աստվածը, որին պաշտել եմ քեզ պաշտելու համար… Դու խաչ եւ համբարձում, վիշտ եւ բերկրանք. միջոց եւ նպատակ: Հայո՛ց աշխարհ, Հայո՛ց աշխարհ» *(Կ. Զարյան, Բանկոոպը եւ մամոթի ոսկորները, Անթիլիաս, 1987, էջ 285)*:

Ով չի սիրում իր երկիրը, ապրում է այլ վայրերում: Մյուսները միշտ վերադառնում են: Կոստան Զարյանի ամենամեծ բաղձանքն է եղել վերադառնալ այն վայրերը, որտեղ ծնվել է «… իր կյանքի առաջին տեսիլքը: Վերադառնալ արմատներին» *(«Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1949, հ. 7, էջ 8)*: Նա, որ ամեն ինչ տվել էր մարդկանց ու աշխարհին, նա, որ իրենով արդարացրել էր շատերի գոյության իրավունքը, մեծ մշակույթի մեջ ձայն ունենալու կարելիությունը, իր կյանքի վերջին շրջանը եւս ստիպված էր ամփոփել նույնքան լքված ու մոռացված վիճակում, ինչպես եղել էր նախկինում: Նա նման եղավ այն արգոնավորդին, որը երկար թափառումներից հետո կանգ էր առել հայրենի տան շեմին, բայց այնտեղ գտել էր միայն իր տան պարապը: Ու երբ ուզեցել էր նավարկել, առջեւը միայն անապատ էր տեսել: Բայց նա արեց ամեն բան՝ իրենով զարդարելու համար հայրենի հողը:

Կոստան Զարյան մարդու, մտավորականի, գրողի ու ազգային գործչի կյանքի հակիրճ բնութագիր կարող է ծառայել նրա իսկ «Արեւմուտք» գործի բնաբանը.

«Դուք քնե՞լ եք, բարեկամ,
Իսկ ես կանգնել եմ ահա մենակ»:

Եվ արդյո՞ք երիցս իրավացի չէր Զարյանը, երբ գրում էր. «Երախտապարտ եմ, օ՜, իմ երկիր, քո հասցրած ցավի եւ վերքերի համար» *(նույն տեղում, 1928, հ. 3, էջ 38)*:

***Արծրուն ԱՎԱԳՅԱՆ***

***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 5*

4. Հայկական համայնքների բազմաշերտությունն ու տարասեռությունն արտահայտվում են նաեւ հիմնադրող *հայերի՝ ըստ պատմաազգագրական մարզերի*, անգամ՝ ըստ պատմաազգագրական շրջանների *ծագման* մեջ, քանի որ, չնայած ազգային միասնությանը, դարեր շարունակ միմյանցից կտրված բնակվելով՝ գավառային ինքնամփոփ մտածելակերպը փոխանցվել է նաեւ սփյուռքահայ համայնքներ, ինչը եւս խոչընդոտ է ազգային համընդհանրության գիտակցման ճանապարհին:




5. Հայկական համայնքների տարասեռությունն արտահայտվում է նաեւ *լեզվական, կրոնական եւ ամուսնական առանձնահատկություններով*: Արդեն վերոնշյալ ամերիկահայ համայնքում կան ե՛ւ հայախոս, ե՛ւ անգլիախոս, ե՛ւ ռուսախոս, ե՛ւ թուրքախոս, ե՛ւ իսպանախոս, ե՛ւ արաբախոս հայեր: Սակայն սա ամենեւին էլ չի նշանակում, թե լեզվական տարասեռությունն արտահայտում է ազգային ինքնագիտակցության բարձր կամ ցածր լինելը, քանի որ, օրինակ, ԱՄՆ-ում բնակվող թուրքախոս հայի մոտ շատ հաճախ ազգային ինքնագիտակցությունն ավելի բարձր կարող է լինել, քան շատ այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն եւն) խոսող հայերի շրջանում: Պարզապես լեզվական տարբերությունները լուրջ խոչընդոտ են հանդիսանում հայ համայնքների ներսում տարալեզու խմբերի միջեւ ինտեգրացիայի գործընթացի ամբողջացման ճանապարհին:

Նմանատիպ խնդիրներ են հարուցում նաեւ *կրոնական տարբերությունները:* Ինչպես արդեն նշել ենք, դարեր շարունակ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանդիսացել է ազգային ինքնության պահպանման ու զարգացման հիմնախարիսխը՝ հանդիսանալով համայն հայության համար ազգային համընդհանուր նորմերի ու սովորույթների, ազգային արժեքների, մշակութային մտածելակերպի ամբողջականացման, պահպանման ու սերունդներին փոխանցման օջախ: Այժմ Հայոց Եկեղեցին շարունակում է մնալ ներազգային միասնականացման կարեւորագույն հաստատությունը: Եվ ահա, այս առնչությամբ էլ եւս մեկ խնդրի ենք հանդիպում, երբ միեւնույն երկրի կամ դրա որեւէ վարչամիավորի հայկական համայնքում կողք կողքի բնակվում են հայ առաքելականներ, հայ կաթոլիկներ եւ հայ ավետարանականներ: Հայտնի է, որ այսօր աշխարհում մոտ 10 միլիոն հայերից ավելի քան 9,3 միլիոնը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետեւորդներ են, մինչդեռ հայ կաթոլիկների թիվը շուրջ 400 հազար է, իսկ բողոքականներինը, տարբեր հաշվարկներով, շուրջ 200 հազար է գնահատվում (այս հաշվարկներում հաշվի չեն առնվել Թուրքիայում բնակվող մահմեդականացված եւ գաղտնի քրիստոնյա հայերը, որոնց քանակը 1-1,5 միլիոնի շրջանակում է դիտարկվում): Միմյանց հետ կողք կողքի բնակվող եւ քրիստոնեության տարբեր ուղղությունների հետեւորդ հայերը հիմնականում վարում են ներկրոնահամայնական կյանք: Փաստորեն, կրոնական համայնքը, որի մասն է կազմում որեւէ սփյուռքահայ, հանդիսանում է նրա ազգային ինքնագիտակցության շրջանակը կազմող օջախը, եւ իր կրոնական համայնքից դուրս գտնվող հայը շատ հաճախ դիտարկվում է որպես ազգային համայնքից դուրս գտնվող անհատ, այսինքն՝ կրոնական եւ ազգային համայնքները երբեմն նույնացված են ընկալվում բազմաթիվ սփյուռքահայերի շրջանում՝ հանդիսանալով նրա ազգային ինքնագիտակցության նեղ շրջանակը՝ բացառելով մյուս կրոնական համայնքների՝ ազգային համընդհանրության մասը կազմելը: Սա լուրջ խոչընդոտներ է հարուցում կրոնական տարբեր խմբերի միջեւ ամուսնությունների համար, ինչը նաեւ ազգային հարատեւության խոչընդոտ է:

Ինչ վերաբերում է *ամուսնական առանձնահատկությունների* մյուս ասպեկտներին, ապա անհրաժեշտ է նշել, որ սփյուռքահայ բազում համայնքներում մեծ թվով հայեր լույս աշխարհ են գալիս օտար, այսինքն՝ ոչ հայ բնակչության հետ խառնամուսնությունների արդյունքում: Նման համայնքի փայլուն օրինակ է բրազիլահայ համայնքը, որտեղ խառնամուսնությունները 93-95 % են կազմում: Այնուհանդերձ համազգային հաստատությունների եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ակտիվ եւ նպատակաուղղված գործունեության հետեւանքով համայնքը մասնակցում է համազգային ձեռնարկումներին՝ զգալի օգնություն տրամադրելով, օրինակ, 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքով առաջացած աղետի գոտուն: Փաստորեն, խառնամուսնությունների արդյունքում ծնված երեխայի հետագա ազգային ինքնագիտակցությունը կարող է որոշվել ծնողներից յուրաքանչյուրի ազգային պատկանելությամբ, սակայն սովորաբար երեխայի մոտ այն էթնիկ ինքնագիտակցությունն է ձեւավորվում, որը շարունակաբար եւ առավելագույն հետեւողականությամբ սերմանվել է ծնողներից որեւէ մեկի կողմից: Սակայն ծնողական աշխատանքն ապարդյուն կանցնի, եթե անհաջող գործեն ազգային հաստատությունները, որոնք շարունակելու են ծնողի կատարած գործը: Ընդ որում՝ ոչ միշտ է անհրաժեշտ ազգային արժեքների մատուցումը քարոզչության ձեւով: Նպատակաուղղված, հաջողված եւ սիստեմատիկ աշխատանքն ազգային հաստատությունների կողմից ինքնին կապող կամրջի դեր կդարձնեն դրանք հայկական էթնիկ ինքնագիտակցության եւ ուծացման ռիսկային խմբերում գտնվող հայերի միջեւ: Դրա արդյունքում է, որ մինչեւ 95 % խառնածին բնակչություն ունեցող հայկական համայնքները շարունակել ու շարունակում են ոչ միայն իրենց գոյությունը պահպանել, այլեւ բարգավաճել:

6. Եվ վերջապես, արդի ժամանակաշրջանում հրատապ անհրաժեշտություն է ստացել *ազգային պետականության գոյության գիտակցական ընկալումը*, որը համազգային բոլոր նպատակների ամբողջական արտահայտիչը կարող է հանդիսանալ համայն հայության մեջ՝ պետական մտածելակերպի արթնացման դեպքում: Ուստի հայոց պետականության շուրջ կարող է համախմբվել հայ ազգը, որ դարեր շարունակ պահպանել է իր գոյությունը մշակութակենտրոնության շնորհիվ, իսկ այդ մշակութակենտրոնության կրողն ու դարերի ընթացքում զարգացնողը Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին էր, որի ծոցից դուրս եկած Ոսկեդարյան Թարգմանիչների գործունեության շնորհիվ էլ հայությունը պահպանել եւ շարունակում է պահպանել իր գոյությունը՝ չունենալով ազգային պետականություն շուրջ 550 տարի (1375-1918 թթ.):

Յուրաքանչյուր սփյուռքահայ անհատ ինքը պետք է հզորացնի Սփյուռքը: Նա պետք է գիտակցի, որ կազմում է մեկ ամբողջության՝ հայ ազգի մասնիկը: Իսկ հայերի պես քիչ քանակություն կազմող ազգերը պետք է միշտ գործունեություն ծավալեն ոչ միայն սեփական, այլեւ ողջ ազգի բարօրության համար, ինչում էլ հենց կայանում է ազգային ինքնագիտակցության ամբողջականությունը:

Բարեբախտաբար մեր ազգը բարձր գիտակցական մակարդակ ունի: Սա, իհարկե, մեր ազգի գլխավոր առանձնահատկություններից է:

***Միայն գիտակցական բարձր մակարդակը կարող է դեպի վերելքի ուղին տանել սփյուռքահայությանը, որն էլ անկասկած կօգնի հզորանալու Հայաստանի Հանրապետությանը եւ Արցախին: Իսկ մեր ազգն էլ օժտված է հզոր ինտելեկտով եւ ի վերուստ տրված գիտակցական բարձր մակարդակով, ուստի մենք կարող ենք կատարել այն ամենը, ինչ կապված է համազգային բարձր ինքնագիտակցության հետ, առանց որի հնարավոր չէ պատկերացնել սփյուռքահայության հետագա գոյությունը:***

*Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ*

# ՀԱՎԱՏ ԱՌ ԱՍՏՎԱԾ ԵՎ ԱՌԱՆՑ ԾԱՎԱԼԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԵՏԸ

*Սկիզբը՝ էջ 5*

Հիմա արդեն օբյեկտի ու սուբյեկտի տարանջատված լինելու վերաբերյալ կարծիքները չափից դուրս անհիմն են հնչում, եւ իրապես առավել ճշմարտացիության ձգտողները, հաշվի առնելով իրենց անձնականի փոխազդեցությունը ճանաչողության օբյեկտի հետ, միջոցներ են մտածում այն նվազեցնելու համար:

Ավելին, անցյալ դարի կեսերին ներկայացված գյոդելյան տեսությունը խարխլեց գիտական ողջ ինքնավստահությունը: Այն հավաստում էր, որ երեւույթի ճշմարտացիությունն ապացուցելու համար բավարար չեն այն մեխանիզմները, որ առկա են նույն համակարգում. անհրաժեշտ են այդ համակարգից դուրս առավել մեծ համակարգի գործիքներ, որ նախ կապացուցեն վերոհիշյալ համակարգի ճշմարտացիությունը: Բայց հենց այն իրականանա, նույն խնդրի առաջ է կանգնելու այս՝ ավելի մեծ համակարգը՝ իր ճշմարտացիությունն ապացուցելու համար: Այս բավականին բարդ բանաձեւը մեծ հարված էր մաթեմատիկային: Այն հերքել փորձել են խորհրդային ժամանակների գիտության անձնվիրաբար ծառայողներն ու հավատացողները: Սակայն մեկը մյուսի հետեւից խոստովանել են, որ թեորեմը հերքել հնարավոր չէ: Այսինքն՝ միանշանակ է, որ ոչինչ հնարավոր չէ համարել միանշանակ ճշմարտացի: Սա դեռ բնական գիտությունների մասին է:

Հոգեւոր բարձունքի երանելի ժամանակներում բնական գիտություններն ուսումնասիրում, դասավանդում ու զարգացնում էին աստվածաբանները: Աստվածճանաչողության ճանապարհին ուսումնասիրելով թվերի խորհուրդն ու խոսքի արվեստը, տիեզերակարգի ու երաժշտության օրենքները՝ որպես արար-աշխարհի մասին համակարգված գիտելիք, նրանց մտքով իսկ չէր անցնում. «Հիմա, Աստված աստվածաբանության ճանաչողության օբյե՞կտն է»: Ըստ էության զգալով իրենց եւ գիտելիքի օրգանական կապը՝ նրանք «ճանաչել» բառն ընկալում էին նույնանալ-մեկանալ իմաստով, ինչն արտացոլվել է Սուրբ Գրքի թարգմանություններում հաճախադեպ «ճանաչեց իր կնոջը» դարձվածներում՝ այսինքն՝ նույնացավ, միացավ - մեկ դարձավ նրա հետ: Այսպես են նրանք ճանաչել Եկեղեցու խորհուրդները, դավանանքը, հոգեւոր կյանքը, աշխարհին ու Աստծուն:

Այսօր՝ տեխնիկական «նվաճումների» դարաշրջանում, երիտասարդները հաճախ են խուսափում հոգեւոր-կրոնական աշխարհայացք դրսեւորելուց: Թվում է՝ եթե ոչ թե թվային սարքավորումներից խոսեն, այլ հոգեւոր ապրումներից, պակաս խելացի կերեւան: Պետական հանրակրթական ծրագրում ընդգրկված Հայ Եկեղեցու պատմություն առարկան դեմոկրատամոլ հարձակումներից պաշտպանելիս հաճախ է հնչում, որ այն պատմություն է, աշխարհիկ առարկա է, կրոնական երանգ չունի եւ քրիստոնեական դավանանքի դասընթաց չէ: Մոռանում են դպրոցական ծրագրի անվիճելի աշխարհիկությունը պահանջողները, որ աշխարհիկ կոչված ցանկացած առարկայի՝ ցանկացած «ամենաբնական» գիտության հիմքում ընկած է չապացուցվող դրույթի պարզ ընդունումը՝ հավատը: Կարծում եմ սա աստվածաբանություն սիրողներն այսուհետ ոչ միայն չեն անտեսի, այլեւ որպես գիտական ելակետ կընդունեն, որ այս ոլորտում գիտական ամենաարդյունավետ մեթոդն աղոթքն է: Չէ՞ որ «ճանաչողության օբյեկտը»՝ աշխարհի Արարիչը, մտքով միայն մասամբ ճանաչելի է Իր արարածների միջոցով, իսկ Իրեն ճանաչելու՝ նույնանալու, միանալու համար պետք է անցնել միջնադարյան երանելի աստվածաբանների նախանշան հոգեւոր վերելքի ճանապարհով:



Թերեւս, բնական գիտությունների միջոցով համոզվեցինք, որ ճանաչողության ձգտումն անցնում է օբյեկտ-սուբյեկտ միաձուլման աստիճաններով, եւ անձնական հոգեւոր ապրումից հեռու աստվածաբանը նույնքան տգետ է, որքան թեորեմներն ապացուցելու անկարող տեսաբանը: Աստծուն փնտրել, գտնել, զգալ, հավատալ ու ճանաչել դժվարանում են, որովհետեւ այդ հավատը ոչ միայն պարտավորեցնող է, այլեւ պակաս տարածված, մինչդեռ այնքան դյուրին է ընդունել լայնորեն տարածված հավատն առ առանց ծավալի նյութական կետը:

*Կարմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

## ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

# «ԱՆԽԻՂՃ ՊԱՐՏԱՏԵՐ ԾԱՌԱՅԻ ԱՌԱԿԸ»

*(Մատթ. ԺԸ 23-35)*



**Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**

*Սկիզբը՝ էջ 6*

- Արդարության առաջնորդող վախը, որ Աստծու երկյուղն է, անշուշտ, դրական երեւույթ է: Ձեր ասածը զուտ քծնանքի ու շահադիտության ոլորտից է, ինչի մասին խոսեցինք, եւ ինչը խոտելի է ու դատապարտելի: Մինչեւ հիմա մենք խոսում ենք բառի մասին: Բայց ներողությունը միայն բառով չի լինում. միգուցե մարդը խոսքով չասի, սակայն գործով ապաշխարի. սա նույնպես ներողություն է, եթե կա անկեղծ զղջում: Թերեւս մարդ մի պահ կոպիտ լինի, բայց հետո հասկանալով՝ զղջա եւ ներողություն ասելու փոխարեն պարզապես սխալը չկրկնի եւ կրկնակին հատուցի: Հատկապես ընտանիքի ներսում «ներողություն» բառն այնքան էլ գործածական չի լինում, որովհետեւ այստեղ խոսքով չէ, որ իրար հասկանում են, այլ հաճախ մի նայվածքով, մի ժպիտով, մի շարժումով...

**- Տե՛ր հայր, Ավետարանում այս առակին նախորդում է «Անհիշաչարություն» վերտառությամբ ենթագլուխը, որտեղ Պետրոսը հարցնում է. «Տե՛ր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչեւ յո՞թ անգամ» (Մատթ. ԺԸ 21): Տերը պատասխանեց՝ ոչ թե 7, այլ 70x7: Դրանից առաջ արդեն Հիսուսը բացատրել էր մեղանչած եղբորը դարձի բերելու ուղիները, որ պետք է անել համբերությամբ եւ առանց խստադրության:**

**Իսկ ի՞նչ անել, եթե ոչինչ չի օգնում:**

- Ավետարանում արդեն գրված է. այդ դեպքում «թող նա քեզ համար լինի ինչպես հեթանոսը եւ մաքսավորը»: Բայց այստեղ մի կարեւոր խնդիր կա, որ երեւում է նաեւ Ձեր հարցի ենթատեքստում: Որպեսզի սխալ չընկալվի Տիրոջ խոսքը եւ հավատացյալներին միմյանց հանդեպ անտարբերության չմղի, ամեն ոք պետք է գիտակցի, որ միշտ չէ, որ սխալը միակողմանի է լինում: Ես կասեի՝ շատ հազվադեպ է այդպես լինում: Անշուշտ, եթե միակողմանի է, պետք է հանդիմանվի եւ ամեն բան արվի այնպես, ինչպես գրված է Ավետարանում: Սակայն իրավիճակը մի փոքր ավելի բարդ է, երբ սխալը երկկողմանի է: Այս դեպքում յուրաքանչյուր մարդ, մինչեւ դիմացինին հանդիմանելը, նախ թող ինքն իրեն քննի, եւ գուցե դիմացինին մեղադրելու կարիքը չլինի: Երկկողմ զղջումն ինքնըստինքյան կբերի ցանկալի խաղաղության ու հաշտության: Երկուստեք մեղանչել էին, երկուսն էլ զղջացին, ներեցին միմյանց. Աստծու սերը եւ խաղաղությունը հաղթանակեցին, ուրեմն՝ արդարությունը կայացավ: Իսկ եթե մի կողմը ներեց, մյուսը՝ ոչ, ուրեմն վերջինը դատապարտվեց: Չէ՞ որ նույն բանն է ասում մեր Տերը՝ առակը եզրափակելով. «Նույնը պիտի անի ձեզ եւ Իմ Հայրը, որ երկնքում է, եթե ձեզանից յուրաքանչյուրը սրտանց չների իր եղբորը՝ նրա հանցանքները» (Մատթ. ԺԸ 35):

**- Ըստ Ձեզ՝ ո՞րն է ավելի ծանր հոգեվիճակ՝ ներել չկարողանա՞լը, թե՞ ներված չլինելը:**

- Եթե խոսքը մարդկային փոխհարաբերությունների մասին է, անկասկած՝ ներել չկարողանալը: Դիմացինից ներված չլինելն այնքան էլ սարսափելի չէ, եթե դու հույս ունես, որ Աստված քեզ կների՝ անկեղծ զղջմանդ համար: Իսկ երբ մարդը չի կարող ներել, նշանակում է՝ սրտի մեջ ոխը, ատելությունը, թշնամանքը այնքան են զորացել, որ նույնիսկ կառավարում են իրեն: Այդպիսի հոգեվիճակն ուղիղ ճանապարհով դժոխք է տանում մարդուն: Ամփոփելով ուզում եմ հիշեցնել. Աստծու պահանջը մեզանից՝ բոլորիցս, ներողամիտ հոգի ունենալն է: Ներողամիտ՝ այն գիտակցությամբ, որ Աստծու առաջ մենք ինքներս հազարապատիկ ավելի ենք մեղանչել: Եվ եթե իմ դեմ մեղանչողը զղջաց եւ դարձավ, ես պարտավոր եմ ներել նրան ոչ թե 7, այլ 70x7 անգամ: Սուրբ հայրերը, ի դեպ, ասում են, որ Տիրոջ ասած 70x7-ը ոչ թե պարզ թվաբանական բազմապատկում է, այլ Քրիստոսը նկատի ունի 7-ի 70 աստիճանը՝ 7x7x7... եւ այսպես՝ 70 անգամ ու ավելի... Այսինքն՝ անսահման անգամ:

*Հյուրընկալեց Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

## Պ. Հովհաննիսյան.

## «Հայ ազատագրական շարժումները. XV դարի կես - XVIII դարի վերջ»

1988 թ. ղարաբաղյան հուժկու շարժումը, որի հանգուցալուծումը եղավ Արցախի ազատագրումը, ջնջեց շատերի մոտ ամրացած այն կարծրատիպը, որ հայ ժողովրդի պատմությունը վշտի եւ ողբի պատմություն է:

Խորհրդային դասագրքերում շատ քիչ է խոսվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին: Մինչդեռ ազատագրական պայքարը մեր պատմության կարեւոր եւ ուսանելի մասն է կազմում: Հայոց պետականության անկումից հետո հայոց ազատագրական շարժումներն իրենց տարբեր դրսեւորումներն են ունեցել, որոնց նշանակալի հանգրվաններին ու առաջնորդներին է նվիրված պատմաբան Պետրոս Հովհաննիսյանի դասախոսությունների շարքը՝ ամփոփված «Հայ ազատագրական շարժումները. XV դարի կես - XVIII դարի վերջ» գրքում:

Հայկական թագավորության անկումից հետո սելջուկյան եւ մոնղոլական ավերիչ արշավանքները դարձան այն նախադրյալները, որոնք պիտի տարածեին ազատագրական շարժման առաջին սերմերը՝ վերարթնացնելով Ներսես Ա Մեծին վերագրվող հայ ազատագրական լեգենդը՝ արտաքին քրիստոնյա ուժերի օգնությամբ ազատագրվելու գաղափարը:

Իր դասախոսություններում Պ. Հովհաննիսյանը հանգամանորեն անդրադառնում է հայ ազատագրական այս գաղափարի զարգացումներին, որ եկեղեցական միջավայրից աստիճանաբար փոխանցվում է հայ ազնվականության ու առեւտրական խավին:

Դեռեւս 15-րդ դարից սկսած հայոց կաթողիկոսները հայկական թագավորության վերականգնման տարբեր ճանապարհներ են փնտրել: Գրքում ներկայացվում են Ամենայն Հայոց կաթողիկոսներ Ստեփանոս Ե Սալմաստեցու, Միքայել Ա Սեբաստացու, Հակոբ Դ Ջուղայեցու եւ եկեղեցական այլ գործիչների կողմից 16-17-րդ դարերում ձեռնարկված քայլերը, արեւմտյան միապետների հետ վարած նրանց բանակցությունները:




Դասախոսությունների առանձին շարք են կազմում 18-րդ դարի հայ ազատագրական պայքարի կարկառուն ներկայացուցիչ Իսրայել Օրու՝ Հայաստանի ազատագրության ծրագրերը: Իսրայել Օրու մահվանից հետո, շնորհիվ այնպիսի առաջնորդների, ինչպիսիք էին Հասան Ջալալյանը, Դավիթ Բեկը եւ Մխիթար Սպարապետը, արձանագրվեցին հայ ազատագրական պայքարի կարճատեւ, սակայն իրական հաջողությունները՝ հայկական անկախ իշխանությունների ստեղծումը Արցախում եւ Սյունիքում:

Ազատագրական պայքարի կարեւոր դրվագներից են 18-րդ դարի երկրորդ կեսին Հնդկաստանի եւ Ռուսաստանի հայկական գաղթավայրերում ծնունդ առած շարժումները, որոնց նշանավոր գործիչներից են Հովսեփ Էմինը, Մադրասի ազատագրական խմբակի հիմնադիր Շահամիր Շահամիրյանն ու նրա համախոհները, Ռուսաստանում հաստատված Մովսես Սարաֆյանն ու Ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղությանը:

15-18-րդ դարերի երեքհարյուրամյա ազատագրական պայքարի մասին պատմող Պ. Հովհաննիսյանի դասախոսությունների շարքը՝ պատմական այս բոլոր դեպքերի ու դեմքերի շարադրմամբ, ուղղված է ինչպես բուհերի ուսանողներին, այնպես էլ՝ ընթերցող լայն շրջաններին: Գիրքը տպագրվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ եւ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ Հրաչիկ Սիմոնյանի խմբագրությամբ:

Հեղինակն իր գիրքը նվիրել է «Մեծ Երազանքի ճանապարհին ընկած» իր ուսանողների՝ Վարդան Բախշյանի, Վարդան Ղալաքյանի եւ Թաթուլ Կրպեյանի խնկելի հիշատակին: Հարազատ անուններ յուրաքանչյուրիս համար, որ հերոսացվել են մեր նորօրյա ազատագրական պայքարում՝ ղարաբաղյան հերոսամարտերում:

*Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ*

## Հրատարակվել են 2011 թ. օրացույցներ




Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել 2011 թ. օրացույցներ:

Այս տարի լրանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական օրացույցի տպագիր հրատարակության 145-րդ տարին: Օրացույցն իր մեջ բովանդակում է եկեղեցական տարվա մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: 2011 թ. պաշտոնական օրացույցը կազմել են Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս Աջապահյանը եւ Մայր Աթոռի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս Տիգրանյանը: Օրացույցի վերջում զետեղված են նաեւ տեղեկություններ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռների եւ թեմերի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության եւ պաշտոնեության վերաբերյալ:

Հրատարակչական բաժնի կողմից լույս է տեսել նաեւ 2011 թ. սեղանի օրացույց: Ամենօրյա ժամատախտակներին զուգահեռ՝ այն բացատրություններ է տալիս բոլոր տոների եւ սրբոց հիշատակության օրերի մասին:

Այս տարի Մայր Աթոռը հրատարակել է նաեւ պատկերավոր օրացույց՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Հրաչյա Ռուխկյանի նկարներով: 1960-ական թթ. երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ օժանդակությամբ Հ. Ռուխկյանը ստեղծել է Հայաստանի պատմական եկեղեցիների շուրջ 120 պատկեր, որոնցից լավագույնները զարդարում են այս օրացույցի էջերը:


**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**

Ստոր. տպագր.
2.02.2011 թ.

**Տպաքանակը՝ 2100**

**Գինը՝ 50 դրամ**